

Ք Ս Ա Ն Ե Օ Թ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“,
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւօրեայ օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.



ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«Մշակ» գինն է, անպատճուրկ 1-ից մինչև տարվայ վերջը 2000 ռուբլի. մէկ ամսվա-
նը—մէկ ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն չորս ամսվայ համար 2 դոլար,
Եւրոպայի բաժանորդները—10 ֆրանկ:

Կարգաւթեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելու, պէտք է գրել Նոտեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“;
իսկ արտասահմանից—TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Շ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ձ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչպէս վերացնել.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մեր իրականութիւնը, Նաւազարացիները Սե-
ւանի ծովակի վրա. Նամակ Պետերբուրգից.
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ամերիկայից.
Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱՑՆԵԼ

Մեր գիւղական կեանքը ամենազգուշելի,
հրէշաւոր երեւոյթներէն մէկն էլ այն ստոր
ու վայրերն է, որոնք գիւղում է գիւղացին,
երբ պէտք է վրէժ հանել իր
հարեանից: Գիւղացի, ծածուկ, նա հրէշ-
հում է իր հակառակորդները արտը, կո-
տորում նրա այգու ծառերը, վերաւորում,
անպէտքացնում է կամ ուղղակի մորթո-
ւում է նրա անասուններին: Գիւղական
յանցագործութիւնների ամենատարածված
ձևն է սա և, երևի, նոյնքան հին, որքան
հին է ինքը, հայ գիւղը: Այն ժամանա-
կից, երբ գիւղը նոյնպէս հանդէս եկաւ
մեր մամուլի մէջ իբրև խնամքի, լոյսի
կարօտ մի միջնաւայր, մեր դաւաճական
թղթակիցները գիւղական ցաւերի մէջ շա-
րունակ այս վայրենութիւններն էին մատ-
նացոյց անում: Մենք շատ անգամ ենք
խօսել այդ տմարդի, անբարոյական սովո-
րութեան դէմ, բայց տեսնում ենք, որ
նա չէ վերանում և մանաւանդ այս տարի
յաճախ կրկնվում էր մեր գիւղերում:

Հարկ է չափաւորել, թէ որքան
մեծ չարք է դա գիւղական անտեսու-
թեան մէջ, հարկ է չափաւորել, թէ որ-
քան յուսահատական է այդ ընդհանուր
երեւոյթը իբրև գիւղացու բարբարոս ան-
գիտութեան, հրէշաւոր հասկացողութիւն-
ների մի խորը նշան: Այն դէպքում
գաղտնիք է, որ դա գիւղական խաւարի
արդիւնքն է, ինչպէս ուրիշ շատ ցաւեր
և խոցեր ճգնաժամային շատ և շատ
դեպքերում է ցոյց տալիս մանկական միա-
մտութիւն, և նայելով նրան, մենք ա-
սում ենք, որ այդ բոլոր չարքերը կը
վերացնեն լոյսն ու գիտութիւնը: Իսկ միան-
գամայն ձիւղ է: Բայց անհրաժեշտ է և
այն, որ այդ փրկարար լոյսը չափազանց
գանգաւոր է առաջանում, այնքան
գանգաւոր, որ նոյն իսկ կրկին քայքայի
հետ էլ չէ կարելի համեմատել: Աս-
կայն, անհրաժեշտ է կուսել չարքերի
դէմ, չէ կարելի ձեռքերը ծալած նստել
և սպասել թէ երբ կը գայ ամենքի ցան-
կացած օրը: Գիւղացին իր խաւար տգի-
տութեան մէջ պիտի ունենայ հասկացող
առաջնորդներ, պիտի գտնվի կենդանի
խօսքի և օրինակի բարեբար ազդեցու-
թեան տակ, որպէս զի կարողանայ զար-
գացնել իր մէջ բարի հակումներ, հասկա-
նալ չարն ու բարին: Այդ կողմից էլ, ինչ-
պէս գիտենք, մեր գիւղը անմիջապէս
գրութեան մէջ է գտնվում: Նա ունի

անզբաղեղ քահանայ, որ իր հասկացո-
ղութիւններով նոյն խաւար գիւղացին է,
ուրիշ տանուէր, որ նոյնպէս աղէտ ու
անհասկացող գիւղացի է և միայն ծծել
գիտէ: Եթէ գիւղացին այսպէս չը լինէր,
շատ հեշտ կը լինէր գիւղի համար կուսել
վրէժառութեան բարբարոս սովորութեան
դէմ, որ այնքան վնասներ է տալիս, այն-
քան արտասունքների պատճառ է դառ-
նում:

Արտեր հրդեհողները, միգրատ ծա-
ռեր, անասունների կոտորույթները խրախու-
սում են այն հանգամանքից, որ անպա-
տիժ են մնում: Օրէնքը չէ կարող այս
դէպքում իր դերը կատարել, քանի որ չէ
կարելի հաստատել յանցաւորի մեղքը.
Մէջանդ ոչ վիսնի կան, ոչ դրական ա-
պացոյցներ. ստոր վրէժառութեան զոհ
դարձած գիւղացին ամենաշատը կարող է
ցոյց տալ իր հակառակորդին, կասկածներ
յայտնել. բայց դա բաւական չէ, ոչ մի
դատաւոր չէ կարող կասկածների վրա
հիմնել իր դատաւճիւղը: Մնում է, ուրեմն,
գիւղի մի ուրիշ միջոցի, հասարակական
խղճի դատաստանին: Այդ միջոցը սկզբուն-
քով ընդունել է Նուրաւեր գիւղը, և կա-
րելի է հաւատալ որ այնտեղ, եթէ գոր-
ծադրվի միջոցը ամենայն խստութեամբ,
մեր նկարագրած յանցանքը գնալով կը
պակասէ:

Իսկ միջոցը այս է: Իւրաքանչիւր հա-
սարակութիւն իրաւունք ունի համախո-
սական վճռով հեռացնել իր միջից իր ա-
րատաւոր անդամներին: Գիւղը հեշտ կարող
է իմանալ թէ ով էր ընդունաւոր այս ինչ
յանցանքը գործելու, կարող է հեշտ զեռու-
նել եթէ ոչ փաստական, գտնել բարոյա-
կան ապացոյցներ մեղադրանքը հաստատե-
լու համար: Հասարակական ժողովը մըա-
նում է այնպիսի հանգամանքների ընտե-
րութեան մէջ, որոնք հասարակար համար դո-
յութիւն ունենալ չեն կարող. ժողովը
համոզմունքով գտնելու իրաւունքն ունի,
նրա առջև յանցանքի դրական փաստեր
կորոզ են չը լինել, բայց նա ընտելում է
թէ որքան հնարաւոր են վնասվածի կաս-
կածները, որքան կասկածի են ինքնակաճը
և յանցանքի զոհ իրանց յարաբերութիւն-
ներով կարող էին տեղիք տալ վայրենի
անգիտութեան: Մի խօսքով հասարակական
ժողովը, իբրև համայնական խղճի դա-
տաստան, շատ միջոցներ ունի հասկանա-
լու, համոզվելու համար: Ետա յաճախ է
պատահում, որ ոճրագործը ման է գալիս
ամենքի առաջ, բայց պատժել նրան չէ
լինում, դրական փաստերի բացակայու-
թեան պատճառով: Հէնց այդպիսի դէպ-
քերի համար է օրէնքը իրաւունք տուել
հասարակութեան ընդհանուր ժողովով
պատժել իր արատաւոր անդամներին:

Ահա հասարակութեան այդ իրաւունքը
պէտք է գործադրել հրձիգների, այգիների
և անասունների կոտորույթների դէմ: Մենք
մի րօպէ անգամ չենք կասկածում, որ

գիւղում իւրաքանչիւր այդպիսի դէպք
սարսափ և խղճահարութիւն է պատճա-
ռում: Գիւղացին շատ է սիրում իր արան
ու ծառը, իր երախտաւոր անասուններին
և նա չէ կարող անտարբեր նայել իր հա-
մագիւղացու վշտին ու արտասունքներին,
երբ նա զոհ է գնում իւրաքանչիւր վրէ-
ժառութեան: Նա միայն մի բան չէ հաս-
կանում, այն, որ իւրաքանչիւր աղէտի
դէմ հեշտ կարելի է կուսել հասարակու-
թեան միացած ոյժերով, ընդհանուր հա-
մարախութեամբ: Այդ հանգամանքը պէտք
է պարզ լինի գիւղացու համար. և մենք
կարծում ենք, որ տեղական իշխանու-
թիւնները պիտի բացատրեն գիւղական
համայնքներին այդպէս գործելու բարե-
ները, պիտի ընդհանուր կանոն դարձնեն
հասարակական վճիռներով այդպիսի յան-
ցաւորներին պատժելը: Ենթադրեմք, որ
համայնակ է, որ գեղեցիկ օրինակներ կա-
րող են հանդիսանալ այն գիւղերը, ուր
կան փոքր ի շատ են հասկացող մարդիկ:
Այդպիսի մի գիւղ, մտնելով իր մէջ այն
միջոցը, որ ընդունել է Նուրաւեր գիւղը,
չըջակայ բազմաթիւ գիւղերի համար կը
դառնայ իրական փորձ, կենդանի օրինակ...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Միջնադարեան սխալատիկան իր գլխաւոր
ուշադրութիւնը դարձնում էր դիւանդակի
վերացական դատողութիւններ և վճիռ անելու
արտեստի վրա, ինչ վերաբերում է բովանդա-
կութեան: Նա ոչինչ ինքնուրոյն, նոր նիւթ, սե-
փական դիտողութիւններ ու հետազոտութիւններ
չէր բերում, այլ անվերջ ծամծմում էր Պատո-
նի և սուրբ գրքերի մտքերը: Կենսական և ոչ մի
նշանակութիւն չը գտնելով այդ բոլոր ցնդաբա-
նութիւնների մէջ և ոչինչ չը հասկանալով սխա-
լատիկաների լեզուից, ժողովուրդը բնականա-
բար չէր էլ հետաքրքրվում նրանց երևելու տակ-
տեսներով և չարտաւարում էր ինչն էր սեփա-
կան փորձով, զբոսբոս, դարձան գտնել իր ցա-
ւերին: Իսկ սխալատիկաներն իրանք գրում էին,
իրանք կարգում և հրձում իրանց սրամիտ դա-
տողութիւններից...

Չափազանցութիւն չի լինի, եթէ ասենք որ
մեր գրականութիւնն ու մամուլը մեր ժողովրդի
համար, վերոյիշեալ տեսակետներով, մի նոր
սխալատիկա է: Ի հարկէ այդ նոր սխալատի-
կան Պատոնի և սուրբ գրքերի փոխարէն ունի
այլ հեղինակութիւններ, ի հարկէ դիւանդակի
մէջ վարժվելու համար մեր նոր սխալատիկաներն
այլ թեմաներ են ընտրում, բայց նիւթի նորու-
թեան, ինքնուրոյնութեան, անկախ հետազոտու-
թիւն անելու տեսակետից և մեր ժողովրդի կեն-
սական պահանջների կողմից այդ տրակտատ-
ները, միջնադարեան սխալատիկայի նման, չեն
չօչնալով և կենսական նշանակութիւն ունեցող
խնդիրներ և եթէ փորձում են անել—այդ լի-
նում է համաքայլին ստրկամտութեամբ, հետե-
ւելով սերտած դատելին. այս ինչ երևելի հեղի-
նակը այս ինչ բանի համար ասել է այս, բայց
թէ արդեօք այդ նոյն երևելի հեղիւնակը նոյնը
կասէր համաքայլի գտնված տեղում և միջնաւայ-
րում, այդ արդէն մեր համաքայլի գիտնալու
բանը չէ, որովհետեւ այդ համաքայլ մի թուով
է, որը ինքնուրոյն առողջ միտք չունի՝ ջնկելու
համար «մանրամասնութիւնները» և «ուրոյն
պայմանները»:

Հետևանքը ինչ է. մեր մամուլն ու գրակա-
նութիւնը մի բուռն մարդկանց հետաքրքրու-
թեան առարկա է, իսկ ժողովրդի համար...
«Իբրև զայդին» որ հնչէ կամ իբրև զինչդայս որ
զօղանջնաւ... Համոզվելու համար վերև ասած-
ների մէջ ընթերցողը թող իր յիշողութիւնով
անցկացնէ մեր ամսագրիներն ու թերթները և,
մի կողմ թողնելով լուրերի բաժինը, յիշէ «արն-
տեսական, փիլիսոփայական, էսթետիկական
առարկաներ» յօդուածները և հարց տայ

իրան—դրանց որ մէկից է նա կարգաւորել
10 տող. և եթէ չէ կարգաւորել, ինչն է եղել
պատճառը: Սա կարծում եմ, պատճառը այն
է, որ սկզբից և եթ նկատելի է, որ այդ դա-
տողութիւնների մէջ համաքայլին ստրկամտու-
թեամբ և միջնաւայրի կերպով ծամծմվում են ու-
րիշների ասածները, որոնք աւելի լաւ կը լինէր
հէնց թարգմանաբար բերվելն, քան համաքայլի
անհամ կոմպլիքացիայի համեմով: Դուք զգում
էք, որ ոչինչ նոր բան չէ գտնելու այդ երկար
ու ձիւղ երեսների մէջ, որովհետեւ այդ բոլորն
ամենահեռաւոր կապ միայն ունի ձեզ հետա-
քրքրող կենսական խնդիրների հետ:

Եթէ դուք չը բաւականանալով այդ ինքնա-
դիտողութեամբ, հարուն Արաշիդի նման մտնէք
ժողովրդի մէջ, լսեք նրա դարձեւ, հետաքրք-
վեք նրան յուզող խնդիրներով, դուք կապէք
տեսնելով, որ մալի չափ առնելով, կապ չը
կայ նրա կեանքի և մեր գրականութեան մէջ:
Մեր նոր սխալատիկաները սաւառում են կեան-
քից հեռու, տառերից ստեղծված մի վերացա-
կան, երանելի աշխարհում, իսկ ժողովուրդը իր
կենսական կարեւորութիւն ունեցող խնդիրների
պատասխանը գտնում է իր դառն փորձի մէջ,
ինչն է իր գլխի ճարը տեսնում, որովհետեւ նա
ոչինչ չէ հասկանում ոչ մեր դիւանդանոս բանաս-
տեղծների տեսլիցից, ոչ բարձրաթիւղ սրակ-
տասներ գրող պարոնների խօսքերից:

Մ օ ս կ վ ա . Լ ա ռ Ն Ս ա թ զ ա ճ ա ճ

ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԵՒԱՆԻ ԾՈՎԱԿԻ ՎՐԱ

Անցեալ ամառ եղբ. Ծովանեանների կողմից
մի մասնագէտ եկաւ Նոր-Բայազետի կողմերը,
սկսեց ջրաբաշխական հետազոտութիւններ կա-
տարել Սևանի ծովակի շրջակայքում, ընդհե-
ծովանեայ տեղերը, ջրի խորութիւնը, ջրա-
պատը, որոնց նաւահանգիստներ կառուցանե-
լու տեղերը և այլն: Դիւանդոր նաւահանգիստ-
ները լինելու են, որքան լսում ենք, Ձիւղալու,
Նորալուզ, Եօթա և Բասարգէշար ծովափերայ
գիւղերում:

Յայտնի է, որ Սևանի ծովակում լողում են
փոքր առաքատաւոր մակոյկներ կամ նաւակ-
ներ, որոնք կանոնաւոր կերպով չեն կարողա-
նում առեւտրական երթևեկութիւն պահպանել
լճի եղբայրների հետ: Տեղական ցամաքային
ճանապարհների անյարմարութեան և սալե-
րի թանգութեան պատճառով, արտադրողները
ստիպված են իրանց ապրանքը փոխադրել այդ
նաւակներով: Սակայն երբեք չենք տեսել, որ
մի օր և է նաւակ, առանց թրջելու և փչաց-
նելու իր բեռը, դուրս բերի ծովից և անփորձ
յանձնէ տիրոջը: Օրինակի համար, Մաղաւ-Բա-
սարգէշարի նաւամատոյցից մի բեռն ցորեն է
բարձրվում, նաւակը ճանաչում անցնում է մինչև
Նոր-Բայազետ կամ Ձիւղալու ամբողջ օր ու
գիւղեր և թրջված բեռը տալիս է տիրոջը,
որը եթէ այդպէս ամբարում է՝ հացահատիկը
փչանում է, իսկ եթէ ուղում է չորացնել՝ ան-
ասելի դժուարութիւններ է կրում, զուր ժա-
նակ վատնելով և աւելորդ ծախսեր անելով:
Այժմ բաւական լուր նաւակներ են բանում
Սևանի ծովակի վրա, որոնք ոչ մի բաւարարու-
թիւն չեն տալիս տեղական փոխադրական գոր-
ծին, դեռ չենք խօսում այն դժուարութիւնների
մասին, որ առաջանում են այդ մակոյկ-
ները, խորասուզվելով և ջրի ալիքներին զոհ
տալով թէ մարդկանց և թէ բեռները...

Ահա այդ աննպատ պայմաններին վերջ կը
տայ եղբ. Ծովանեանների ձեռնարկութիւնը,
և պէտք է յուսալ, որ այժմ, քանի որ կառավա-
րութիւնից արտոնութիւն է ստացվել, որ առաջ
չողենաւներ կը բերվեն և երկրի փոխադրու-
թեան գործին կանոնաւոր ընթացք կը տրվի:
Նաւերով կը փոխադրվեն ցորեն, դարի, կտա-
ւատ, սօրուկ, տարեկան, ձէթ, ձու, ձուկ, իւղ,
բուրդ, կաշի և այլ մթերքներ: Ներմուծվու-
ն են՝ ածուխ, փայտ, երկաթ, շաքար, մասուֆա-
տուրային և այլ ապրանքներ, իսկ անարգասա-
ւոր տարիներում նաև ալիւր, հացահատիկներ:

Շուգանաւի հիմնադրով, սայրերի և կառքերի երթնելովներն մասամբ կընդհատուի կամ կը դադարի Նոր-Բայազէտից մինչև Յենոյկա կայաւանը և կը վերադառնան անշուշտ պատային կայաւանները Հաջիմուխան գիւղում և Նոր-Բայազէտում, որը հետո է Սևանի ծովակից 3—4 վերստ միայն: Հէնց այդ 3—4 վերստ ճանապարհը մինչև ծովակը պէտք է կանոնաւորել:

Մի շատ օգտաւէտ գործ կատարած կը լինեն եղբ. Մովսէսեանները, եթէ շահագործեն նաև Ղարաբաղի հանքային ջրերը, որոնք յայտնի են մեզանում «Տաք ջուր» անունով և որոնք բնական մի թանգազին հարստութիւն են կազմում: Ձեռք բերելով այդ հանքային ջրերը, նրանք կարող են մի գեղեցիկ կուրօրտ ստեղծել այս կողմերում, կապելով այդ ջրերի հետ ժողովրդի առաջին բազմութիւնը, որը պէտք է ճանապարհորդէ նրանց շողանալով: Հանքային այդ թանգազին ջրերը գտնվում են Սևանի ծովակից դէպի հարաւ-արեւելք 20—30 վերստ հեռավորութեան վրա, Մազար-Բասարգէշարի բարձրաւանդակներում, Նոր-Բայազէտի և Գանձակի սահմանագլխին: Սակայն այդ օգտաւէտ հանքային ջրերը մնալով իրանց բնական վայրերում մէջ անպատասկ կորչում են, թէև հազարաւոր հիւանդներ ամառովայ երկու ամիսներին յաճախում են և ոչ-գործնական կերպով օգտվում այդ ջրերից: Ով աւելի հետաքրքրվում է «տաք ջրով», թող բարեհաճի կարդալ «Մի քանի օր Ղարաբաղի հանքային ջրերում» յօդուածը, որ տպւած է «Մշակի» 1888 թ. №26 121, 122 թանաթարակների բաժնում:

Վերջացնելով մեր խօսքը՝ չենք կարող չը ցանկալ ամենայն աջողութիւն եղբ. Մովսէսեաններին, որոնք շողանալի հիմնադրութեամբ մեծ դարկ կարող են տալ Նոր-Բայազէտի և նրան կից տեղերի թիմած կենսոյին: Ի դէպ, մենք չենք մոռանում այն խօսքերը, երբ հանդուցեալ Գ. Արծրունին, առաջին անգամ տեսնելով Սևանի ծովակը Սեմենովկա կայաւանից՝ համեմատեց նրան Շվեյցարիայի ծովակի հետ և յոյս յայտնելով՝ արձանագրեց, թէ շուտով գուցէ շողանալու լողայ այդ ծովակի վրա: Եւ ահա նրա յոյսը արդարաւորապէս պէտք է համարել: Նա մակա դեռ չը կընքած՝ իմացայ, որ «եղբ. Մովսէսեան և ընկ.» գործակալ պ. Տ. Տէրջանեան դալով այստեղ, արդէն ձեռնարկել է նաւամատոյցներ կառուցման գործին:

Գ. Միսանեանց

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐՈՒՄԻՐԳԻՑԻ

Սեպտեմբերի 2-ին

Երէկ, սեպտեմբերի 1-ին, Միքայէլեան մանկ-ծի ընդարձակ սրահում բացվեց համառուսական և միջազգային կաթնատնտեսական ցուցահանդէսը: Ռուսաստանի այնպիսի հեռավոր մասերը, ինչպէս են Անդրկովկասը և Սիբիրը, միացած ներքին նահանգների հետ, իրանց կաթնատնտեսական արդիւնքներով դարձրել են ցուցահանդէսը իրապէս համառուսական: Անդրկովկասը հանդէս է բերել իր թէ տեղական և թէ եւրոպական եղանակով պատրաստած պանիրները, Սիբիրը իր իւղերը, եւրոպական Ռուսաստանը ամեն տեսակ կաթնատնտեսական արդիւնքներ: Արտասահմանից ուղարկված են միայն կաթնատնտեսական գործիքներ և մեքենաներ, ուստի միջազգային բնաւորութիւն կրում է միայն մեքենայական բնույթ: Յուգոսլանդիայը համարվում է կատարելապէս աշղղված, մասնաւոր իւղագործութեան վերաբերեալ իր մասով:

Յուգոսլանդիայի բացման ներկայ էին՝ երկրագործութեան միջնորդ օգնական բարոն Բիսկուլ-Փօն-Վիլդենբերգ, երկրագործական դեպարտամենտի ղեկավար Ն. Խոմենկով, առևտրի և մանուֆակտուրայի դէպարտամենտի ղեկավար Վ. Կովալևսկի, իւնային դեպարտամենտի ղեկավար Ն. Ինիսով, Պետերբուրգի քաղաքապետ Ն. Կլեյզել, ուրիշ բարձրաստիճան անձնք, Ազատ-Տնտեսական ընկերութեան նախագահ Կոմ. Փէյդեն, գումարան տեղերից եկած կաթնատնտեսներ և հրաւիրված պատուաւոր հիւրեր:

Մաղմանքից յետոյ բարոն Բիսկուլ-Փօն-Վիլդենբերգ յայտարարեց ցուցահանդէսը բացված: Այդ միջոցին ցուցահանդէսի մեքենաները միանգամից սկսեցին շարժվել: Կարգադրիչ մասնաժողովի նախագահ Աւետիս Քալանթար, առաջնորդելով հանդիսականներին, քաղաքացի ցուցահանդէս բերված մեքենաների գործողութիւնը և հաղորդեց կաթնատնտեսական արդիւնքներին վերաբերեալ տեղեկութիւններ: Շատ հետաքրքիր է մեքենաների բաժինը, նրա ճոխութիւնը դարձնում է ցուցահանդէսը ուսանելի և գրաւիչ թէ կաթնատնտեսների և թէ հասարակութեան համար:

Յուգոսլանդիայը պէտք է շարունակվի մի ամբողջ ամիս, մինչև հոկտեմբերի 1-ը: Դեռ մի քանի տեղերից չեն հասել ուղարկված կաթնատնտեսական արդիւնքները, այդ տեղերի թւում է և մասամբ Անդրկովկասը: Գնահատող յանձնաժողովները շարունակում են իրանց ջննդութիւնը: Իրերի գնահատութիւնը կը տևի դեռ մի շաբաթ: Գննութեան և գնահատութեան գործի մէջ ներկայ ցուցահանդէսում արված է մեծ առաջադիմութիւն և այդ հանգամանքը իրաւացի կերպով համարվում է ներկայ ցուցահանդէսի ամենանշանաւոր կողմերից մէկը: Սակայն այդ առարկայի մասին կը խօսեմ իմ յաջորդ նամակներից մէկում: Շտապում եմ Ազատ-Տնտեսական ընկերութեան դահլիճը, որտեղ այսօր, ցերեկվայ ժամի 1-ին, պէտք է բացվի կաթնատնտեսների համառուսական ժողովը:

Ա. Քալանթար

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ

Թիֆլիս, սեպտեմբերի 10-ին

Թող տուէք, խնդրում ենք, մի փոքրիկ պատկեր ներկայացնել ձեր ընթերցողներին, որ վերջրած է Կովկասի մայրաքաղաքի հասարակական հիմնադրութիւններից մէկի կենսոյին:

Ամառվայ աֆրիկան շրջը, ինչպէս երեւում է, իր ազդեցութիւնը ունեցել է ի միջի այլոց՝ «Թիֆլիսի ժողովարանին» մի քանի աւագների վրա, որոնց ապօրինի վարժուներ ներկայումս աղմուկի և երկպառակութեան առարկայ է դարձել: Բանը նրանումն է, որ ներկայ սեպտեմբերի 5-ին պիտի վերջանա ժողովարանի բուֆետի և խոհանոցի կապալով տալու ժամանակը, ուստի հարկաւոր էր նորոգել պայմանաթուղթը ցանկացողներին լաւագոյնի հետ աշխատելու համաձայն ժողովարանի կանոնադրութեան § 34-ի, առ դա մ ն ե թ ը Ն զ հ ա ն ու ը ժ ո ղ ո Վ ի հ ա ա ն ու թ ե ա մ ը և ը ն տ ր ու թ ե ա մ ը:

Դեռ յունիսի 27-ին աւագների խորհուրդը տեղական ըլոր լրագրիչներում յայտարարել էր, որ այդ օրը կայանալու է ընդհանուր ժողով վերաստուգող յանձնաժողովի ղեկուցումը լսելու և նոր անդամների ընտրութիւն կատարելու համար: Աւագին ժողովը չը կայացաւ, որովհետև ներկայ չէր անդամների կանոնադրութեամբ պահանջված թիւը, ուստի երկու շաբաթից յետոյ նշանակվեց նոր ընդհանուր ժողով պարապմունքների մի և նոյն ծրագրով: Երբեք պատճառով ժողովին մասնակցում էին հազար 12 անձինք: Ժողովը նախագահողը կիսաձայն և շտապ-շտապ կարգում էր վերաստուգող յանձնաժողովի ղեկուցողներ և այն գեղծումները, որ գտել էր նա, և ինքն էլ վճիռներ էր կայացնում: Վերջապէս, երբ ժողովը պարապմունքների առարկաները մի կերպ վերաբերեց, յանկարծ, անսկզկա կերպով, նախագահողը խնդրեց լրագրողութիւն 10—12 ներկայ ձեռք անդամներից՝ բուֆետի և խոհանոցը կապալով տալու քստ հայեցողութեան աւագներին, բայց կանոնադրութեամբ այդ հարցը, իբրև ն ո ղ հարց, չէր կարող ընդունվի այդ ժողովում:

Երկու ջուխտ և մի կէստ անդամների լուծութիւնը համաձայնութեան նշան ընդունելով, աւագները, որոնք թիւը 9 հոգուց ինչ էր հնդի և այդ 9-ից ե թ ի ու ղ ո Վ ի հ ա ն ու ը ժ ո ղ ո Վ ի հ ա ա ն ու թ ե ա մ ը: Երբ, միանգամայն ապօրինի կերպով ընտրում են իրանց ուղած 2 անձն բուֆետի կապալանու: Հէնց որ ժողովի անդամները իմանում են աւագների այդ վարժուները, անմիջապէս արձանագրում են ժողովարանի ժապաւիննալ մատենանում ընդրը և պահանջում են կանոնադրութեան 41-րդ յօդուածի հիման վրա ընդհանուր ժողով նշանակել: Բողոքին ստորադրեցին 70 հոգուց աւելի անդամներ: Ամբողջ երկու ամիս իրող էին սպասում ընդհանուր ժողով նշանակելու: Աւագներից նա, որը ապօրինի կերպով յունիսի 27-ին այդ հարցը, արեւմտեց էր՝ ամսված է իր սխալ խոստովանել ընդհանուր ժողովը առաջ, իսկ միւսները, ինչպէս երեւում է, շտապելու մի առանձին շահ չունեն:

Սեպտեմբերի 5-ին այդ պարոնները ապօրինի և ինքնազուրկ կերպով բերեց և կարգել էին ժողովարանում իրանց ընտրած կապալանուներին: Այդ գիշեր անդամների և նոր կապալանուների պաշտպան աւագների մէջ մեծ ընդհարում և աղմուկ բարձրացաւ. անդամները բողոքում էին աւագների ապօրինի վարժուների դէմ, սպառնում էին իրանց արդարացի գանդատը հասցնել ուր հարկն է, պաշտպանելով կանոնադրութիւնը և ընդհանուր շահերը: Բայց և այդպէս ապօրինութիւնը մնում է ապօրինութիւն: Ահա թէ ինչպէս ենք մենք հասկանում հասարակական պարտաճանաչութիւնը:

Նոթն անդամներ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Կովկասի կառավարչապետ իշխան Փօլիցին շաբաթ օր, սեպտեմբերի 11-ին, իր ամուսնուհի հետ ուղևորվեց երկաթուղով դէպի Ալեքսանդրօպոլ՝ նոր կառուցած երկաթուղին դիտելու համար, և հետեւեալ օրը, ամսիս 12-ին, վերադարձաւ Թիֆլիս:

Մենք արդէն հաղորդել ենք ձերին գործերի միջնորդ կարգադրութիւնը այն մասին, թէ ինչ լեզուով պէտք է երկու հայերը պետական կամ զինուորական ծառայութեան մէջ ծանուցիւ: Հիմնվելով կառավարիչ սենատի 1899 թ.ի տուած բացատրութեան վրա, թէ պետական ծառայութեան մեջ լեզուն, չէ համապատասխանում սենատի այդ բացատրութեան. այդ պատճառով սենատոր Գորեմիկին խնդրել էր Մկրտիչ Կոթողիկոսից՝ փոխել Մակար կաթողիկոսի վերջին կարգադրութիւնը, իբրև հիմն ընդունելով և այն հանգամանքը, որ Վարսկաստանի և Պարսկաստանի մի քանի տեղերում, որտեղ հայերը չը գիտեն իրանց մայրենի լեզուն, հայ, լուսաւորչական դաւանութեան հոգեւորականները ժամատարութիւնը կատարում են ոչ թէ հին հայկական-գրաւոր լեզուով, այլ տեղական բարբառներով, որից հետեւում է, թէ հայ գրաբար լեզուն չէ կազմում լուսաւորչական եկեղեցու կանոնական լեզուն: Ներքին գործերի պ. միջնորդի այդ կարգադրութիւնը Կովկասի պ. կառավարչապետը մայիսի 3-ին չըլաբերականով հաղորդել է Կովկասի բոլոր նահանգապետներին և չըլանային պետներին ի տեղեկութիւն և ի հրահանգ: Այդ չըլաբերականը տպւած է տեղական ուսուց լրագրիչներում:

Ինչպէս մեզ հաղորդում են, առաջին կիրակի, ամսիս 19-ին, կայանալու է «Թիֆլիսի հայ Բարեգործական ընկերութեան» անդամների առաջին ընդհանուր ժողովը, որ պէտք է կատարի նոր վարչութեան անդամների ընտրութիւնը, համաձայն նոր կանոնադրութեան, որ հաստատվել է ներքին գործերի միջնորդից այս տարվայ յուլիսի 6-ին: Ուրեմն, 1881 թ.ի յունիսի 6-ին հաստատված Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան, ճիշդ 18 տարի գոյություն ունենալուց յետոյ, վերակազմվում է: Ցանկանում ենք վերակազմված «Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութեան» նոյնպիսի արդիւնաւոր գործունէութիւն, որպիսին ունեցաւ դադարած Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութիւնը: Այս առիթով նորից յիշեցնում ենք, որ ընկերութեան գաւառական ճիւղերը կարող են շարունակել իրանց գոյութիւնը, ընդունելով նոր կանոնադրութիւնը:

Մեզ հաղորդում են, որ Պարսկաստանի Սաբալար քաղաքում օգոստոսի 6-ին սաստիկ երկրաշարժ է եղել, որը շարունակվել է ամբողջ 7 օր և կործանել է ոչ միայն ամբողջ քաղաքը, այլ և բազմաթիւ շրջակայ գիւղերը:

Հռոմի արևելագէտների միջազգային ժողովին ղիտութիւնների ակադէմիայից ուղարկվում են Վ. Բաղդով և Կ. Զաքէման ակադէմիկոսները և, մայրաքաղաքի լրագրիչների խօսքով, ճանապարհ կընկնեն նրանք Հռոմ սեպտեմբերի 11-ին:

Ուսումնարանական շրջանների հոգաբարձուներից մէկի այն հարցին՝ թէ ինչ լեզուով պէտք է աւանդել առարկաները հրէական դպրոցներում, ժողովրդական լուսաւորութեան միջնորդութիւնը քաղաքներից, որ հրէական լեզուն և Աստուածաշունչը պէտք է աւանդել անպայման ուսուցելու լեզուով, իսկ Ցալոնը—հնարաւորութեան չափ ուսուց լեզուով՝ համաձայնութիւն կայացնելով այդ մասին հրէական դպրոցների պահողներին հետ:

Մեզ խնդրում են յայտնել, որ ջուլիակահար Վասիլիէվ վերսկսել է, անցեալ տարվայ նման, իր պարապմունքները և ընդունում է ջուլիակ սովորել ցանկացողներին նախկին պայմաններով:

Ռուսաց Կայսերական տէխնիկական ընկերութիւնը մեզ խնդրում է յայտնել, որ ներկայ տարվայ վերջերում Պետերբուրգում կը կայանայ «Համառուսական առաջին էլէկտրո-տեխնիկական ժողովը»: Ժողովը կը բացվի 1899 թ.ի դեկտեմբերի 27-ին և կը տևի մինչև 1900 թ.ի յունվարի 7-ը: Ժողովի նպատակն է ուսումնասիրել էլէկտրո-տեխնիկական կրթութեան ժամանակակից դրութիւնը Ռուսաստանում: Մտադրութիւն կայ բայց անկ նորագոյն գործիքների և գիտերի ցուցահանդէս:

«Черноморский Вѣстник» լրագիրը հաղորդում է, որ Բաթումի պատահեաւորաւորներ երկու վերսկսել են ձեռք բերել ցրվիչների համար,

քաղաքում նամակներ և հեռագիրներ ցրվելու նպատակով:

ԱՐՄԱՌԻԻԻՑ մեզ գրում են. «Գալուստ քահանայ Գալիանց, որ ծերութեան պատճառով երկու տարի առաջ հրաժարվել էր քահանայագործութիւնից, մօտ օրերս վախճանվեց: Թողել է մեծ կարողութիւն, քայց չէ թողել մի բարեյիշատակ գործ»:

Նոր-Բայազէտի գաւառի Վերին-ՂԱՐԱՆ-ԼՈՒՂ գիւղից մեզ գրում են. «Ընտրի տեղ այս տարի կարելի է դարձանով պահել մեր անասուններին, հունձը բաւարար էր, դժուար է միայն ոչխարատէրերի դրութիւնը: Գիւղերից սկսել են բերել և խիստ էժան գինով ծախել ոչխարները»:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Յաւալ է այստեղի օրիորդների դրութիւնը. մինչև այժմ էլ չուշեցի օրիորդի դրադարան յաճախել, կարգաւր, կամ ծանօթ տղամարդու հետ խօսելը մեղք է համարվում: Վերջերս միայն մի քանի ընտանիքներում օրիորդները վայելում են այդ չինչի աղատութիւնը, բայց ցանկալի է, որ միւս ընտանիքներն էլ հետեւին դրանց օրինակին: Միւսանգամայն անուշադիր թողնելով Շուշու անգործ բուրժուաների և կանանց դրախտութիւնները ու փողոցային շաքարատներին անօնիմ նամակները»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻԻՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Ուստի, սեպտեմբերի 4-ին Քիւրբանայ գաղթականների թիւը Միացեալ-Նահանգներում 1895—96 թ.ականներից առաջ շատ անշան էր. ամենաշատը 8 հազար էր հասնում. 96 թ.ականից սկսած մինչև ներկայ օրերը թէև հարկաւորները վերադարձան, այնուամենայնիւ, այժմ վերջին թիւը կրկնապատկված է: Այդ թ.ականներից առաջ ընտանիքների թիւը մատերի վրա կարելի էր համարել, բայց այժմ միայն Ուստում 200-ից աւելի ընտանիք կայ, և որքան առաջ ենք գնում, այնքան աւելի համոզվում ենք, թէ հայկական գաղթականութիւնը Միացեալ-Նահանգներում հաստատվելու տրամադրութիւն ունի, հետզհետէ որոնում է հաստատուն պարապմունքի աղբիւրներ, որով թէ միջոց ունենայ բնիկների նման մարդավայել ապրել և թէ շատից-քիչը ապագան ավանդել:

Գաղթականութեան մի ստուար մասը քաղաքներից են և մեծ մասամբ արհեստաւորներ, որոնք սկզբում տեղական լեզուին ու սովորութիւններին անձնօթ լինելով՝ դատապարտված էին գործարաններում դրաղունքը որոնել, ուր շատ սովորական չէ լեզու իմանալը, բաւական է իր գործը ճանաչել և Ժողովարանութեամբ աշխատել, և այդ կողմից վստահաբար կարելի է աւելի հայ բանուրը լաւ համարում ունի գործարանատիրոջ աչքում: Բայց, ինչպէս սպասել էր, քաղաքացի աչքաբաց հայերը կարճ ժամանակում ծանոթանալով թէ լեզուին և թէ սովորութիւններին սկսում են իրանց ձեռքի արհեստները գործադրել, որոնք թէև գործաւորութիւնից այնքան էլ շահաւոր չեն, բայց այն առաւելութիւնը կայ, որ աղատվում են կոնստոլից և այսուհետ շատ աղատ ժամանակ կունենան շատ օգտակար բաների հետաւետելու: Եւ սա, ի հարկէ, մի նախանձելի առաւելութիւն է, որից զուրկ է իր ամբողջ ժամանակը ծախած բանուր դասը:

Միացեալ-Նահանգների ամեն քաղաքում տարիներից ի վեր երեկոյան դպրոցներ կան հաստատված, ուր չքաւոր դասը, որ տնտեսական պատճառներով ստիպված է իր կեանքի ամենաստիպողական պէտքերի համար ցերեկները աշխատել, ձրապէս կարող է օգտվել, որքան և որ չափով կարող է. և մենք համոզված ենք, որ հայ արհեստաւորները կարող պիտի լինեն երկրի նահապետական սխտանով սովորած արհեստները կատարելութեան հասցնել, եթէ կամը ունենան և ցանկանան յաճախել:

Ուստի հայերի մէջ ուրիշ շարժում, շատ օգտակար ձգտում է նկատվում ներկայումս, որը շատ լաւ ապագայ է խոստանում: Հայ բանուրներից ոմանք խնայողաբար յետ ձգած դրամները մտադրվել են առևտրով շահեցնել և երբեմնակի անհատապէս բացել են մրգավաճառի նպարավաճառի խանութ, բայց տեղացիները մրցունքներն չը դիմանալով՝ ունեցած ջնջին դրամագլխով վրա տալով՝ ապագայէից խոյս են տուել և կրկին մտել գործարան: Այսպիսիներից շատ քչերը, այն էլ վերին աստիճանի ճարպիկները, կարողացել են իրանց դոյութիւնը բաշտալ և աննշան դրք բռնել. և սրանց ապագան շատ խախտու է ներկայումս կաղթականութիւնը:

Типографія Грузинск. Т.—ва Большая Ванская ул., № 27.